06.10.25 - 10.10.25
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ՀՀ, Երևան, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) ս.թ. հոկտեմբերի 6-10 կազմակերպում է միջազգային երիտասարդական 11-րդ գիտաժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին։

Ս.թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:30-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային երիտասարդական 11-րդ գիտաժողովի բացման հանդիսավոր արարողությունը: Ողջույնի խոսքով հանդես կգան ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ՈՒԳԸ նախագահ Սիրանուշ Բաղումյանը, ինչպես նաև հրավիրյալ գործընկերները: Բացման արարողության համերգային ծրագիրը կապահովի ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը և ոչ միայն:

Գիտաժողովի շրջանակում կանցկացվեն պանելային քննարկումներ, գիտաճանաչողական այցեր, մշակութային հանդիպումներ և այլն:

Գիտաժողովը ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին հնարավորություն է ընձեռում ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց գիտական հետազոտության արդյունքները, կատարելագործելու գիտական աշխատանք կատարելու հմտությունները, ինչպես նաև կապեր հաստատելու Հայաստանի և արտերկրի երիտասարդ հետազոտողների հետ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am